ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2018

02.2018
Փետրվար

03.2018

04.2018

05.2018

06.2018

07.2018

08.2018

09.2018

10.2018

11.2018

12.2018

ՀՀ կենտրոնական բանկի

Թողարկման 25-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2018

Փետրվար

թիվ 2 (234)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

4 «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՕ-117-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

6 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Գրավիչ», «ԻՆՎԵՆՏ ՍԵՐՎԻՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ների գրավատնային գործունեության լիցենզիաների գործողությունը կասեցնելու, «ԲԻԶՆԵՍ ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ-ին գրավատնային գործունեության լիցենզիա տրամադրելու, «ՄոբիԴրամ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպության «Մասիվ» և «Ծիծեռնակաբերդի խճուղի» մասնաճյուղերը հաշվառելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 գրավատան, 1 վարկային կազմակերպության նկատմամբ տուգանք կիրառելու, 2 վարկային կազմակերպության և 2 արտարժույթի փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 13Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 292-Ն և ֆինանսների նախարարի թիվ 14-Ն համատեղ որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշման մեջ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թ. դեկտեմբերի 16-ի թիվ 1032-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

21 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 299-Ն և ֆինանսների նախարարի թիվ 15-Ն համատեղ որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին»

24 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-123-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածում «պարտավոր է եռօրյա ժամկետում քննել դիմումը և կայացնել» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով[***] սահմանված կարգով կայացնում է» բառերով:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը «կարող են» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
27 փետրվարի 2018 թ., Երևան, ՀՕ-117-Ն

** ՀՀՊՏ 2008 N 47(637),23.07.08:*
*** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2018 թվականի փետրվարի 9-ին (ՀՀՊՏ N 16 (1374), 5.03.18):
**** ՀՀՊՏ 2018 N 16(1374),05.03.18:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Կասեցվել է*** «Գրավիչ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության լիցենզիայի գործողությունը (որոշում թիվ 15Ա):
- ***Գրավատնային գործունեության լիցենզիա է տրամադրվել*** «ԲԻԶՆԵՍ ԿՐԵԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 16Ա):
- ***Կասեցվել է*** «ԻՆՎԵՆՏ ՍԵՐՎԻՍ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության լիցենզիայի գործողությունը (որոշում թիվ 17Ա):
- ***Հաշվառվել են*** «ՄոբիԴրամ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Մասիվ» և «Ծիծեռնակաբերդի խճուղի» մասնաճյուղերը (որոշում թիվ 18Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 գրավատան, 1 վարկային կազմակերպության նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 330000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/76Ա,1/94Ա), 2 վարկային կազմակերպության, 2 արտարժույթի փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում*** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/74Ա, 1/76Ա, 1/90Ա, 1/107Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2018 թ. փետրվարի 13-ի թիվ 13Ա որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6. 0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 7.5%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 4.5%:***

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշման մեջ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թ. դեկտեմբերի 16-ի թիվ 1032-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառումը համապատասխանեցնել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին,

հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը որոշում են.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 322-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի օգոստոսի 27-ի թիվ 629-Ն, 2004 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 993-Ն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2008 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 840-Ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 1032-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանում» (այսուհետ՝ Հաշվային պլան) և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգում» (այսուհետ՝ Հրահանգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Հաշվային պլանում բոլոր «վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» բառերը՝ դրանց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. դեկտեմբերի 26-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.02.2018 թ. (ՀՀԳՏ N6 (609), 15.02.2018):

2) Հաշվային պլանում բոլոր «մինչև մարման ժամկետը պահվող» բառերը՝ դրանց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «ամորտիզացված արժեքով հաշվառվող» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով,

3) Հաշվային պլանի 12-րդ բաժինը 12810-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթաբաժիններով.

«

129	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր, փոխառություններ և այլ պահանջի իրավունքներ		
	1290	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ՝ տրված ֆինանսական կազմակերպություններին	
		12900	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ՝ տրված բանկերին
		12901	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ՝ տրված վարկային կազմակերպություններին
		12902	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ՝ տրված ներդրումային ընկերություններին
		12903	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ՝ տրված ապահովագրական ընկերություններին
		12904	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ՝ տրված այլ ֆինանսական կազմակերպություններին
	1291	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ՝ տրված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց	
		12910	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ՝ տրված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպություններին
		12911	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ՝ տրված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպություններին
		12912	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ՝ տրված հիմնարկներին
		12913	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ՝ տրված պետական ոչ առևտրային կազմակերպություններին
		12914	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ՝ տրված այլ ոչ առևտրային կազմակերպություններին
		12915	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ՝ տրված ֆիզիկական անձանց
		12916	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ՝ տրված անհատ ձեռնարկատերերին
		12917	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ՝ տրված այլ անձանց
	1292	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ պահանջի իրավունքներ ֆինանսական կազմակերպությունների գծով	
		12920	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ պահանջի իրավունքներ բանկերի գծով
		12921	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ պահանջի իրավունքներ վարկային կազմակերպությունների գծով
		12902	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ պահանջի իրավունքներ ներդրումային ընկերությունների գծով
		12923	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ պահանջի իրավունքներ ապահովագրական ընկերությունների գծով
		12924	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ պահանջի իրավունքներ այլ ֆինանսական կազմակերպությունների գծով

	1293	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ պահանջի իրավունքներ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց գծով	
		12930	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ պահանջի իրավունքներ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպությունների գծով
		12931	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ պահանջի իրավունքներ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպությունների գծով
		12932	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ պահանջի իրավունքներ հիմնարկների գծով
		12933	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ պահանջի իրավունքներ պետական ոչ առևտրային կազմակերպությունների գծով
		12934	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ պահանջի իրավունքներ այլ ոչ առևտրային կազմակերպությունների գծով
		12935	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ պահանջի իրավունքներ ֆիզիկական անձանց գծով
		12936	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ պահանջի իրավունքներ անհատ ձեռնարկատերերի գծով
		12937	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ պահանջի իրավունքներ տրված այլ անձանց գծով

»,

4) Հաշվային պլանի 13-րդ բաժինը 13710-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթաբաժիններով.

«

138	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ		
	1380	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ՝ տրված ֆինանսական կազմակերպություններին	
		13800	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ՝ տրված բանկերին
		13801	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ՝ տրված վարկային կազմակերպություններին
		13802	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ՝ տրված ներդրումային ընկերություններին
		13803	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ՝ տրված ապահովագրական ընկերություններին
		13804	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ՝ տրված այլ ֆինանսական կազմակերպություններին
	1381	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ՝ տրված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց	
		13810	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ՝ տրված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպություններին
		13811	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ՝ տրված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպություններին
		13812	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ տրված հիմնարկներին

		13813	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ տրված պետական ոչ առևտրային կազմակերպություններին
		13814	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ՝ տրված այլ ոչ առևտրային կազմակերպություններին
		13815	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ՝ տրված ֆիզիկական անձանց
		13816	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ՝ տրված անհատ ձեռնարկատերերին
		13817	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ՝ տրված այլ անձանց
	1382	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ պահանջի իրավունքներ ֆինանսական կազմակերպությունների գծով	
		13820	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ պահանջի իրավունքներ բանկերի գծով
		13821	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ պահանջի իրավունքներ վարկային կազմակերպությունների գծով
		13802	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ պահանջի իրավունքներ ներդրումային ընկերությունների գծով
		13823	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ պահանջի իրավունքներ ապահովագրական ընկերությունների գծով
		13824	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ պահանջի իրավունքներ այլ ֆինանսական կազմակերպությունների գծով
	1383	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ պահանջի իրավունքներ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց գծով	
		13830	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ պահանջի իրավունքներ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպությունների գծով
		13831	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ պահանջի իրավունքներ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպությունների գծով
		13832	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ պահանջի իրավունքներ հիմնարկների գծով
		13833	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ պահանջի իրավունքներ պետական ոչ առևտրային կազմակերպությունների գծով
		13834	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ պահանջի իրավունքներ այլ ոչ առևտրային կազմակերպությունների գծով
		13835	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ պահանջի իրավունքներ ֆիզիկական անձանց գծով
		13836	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ պահանջի իրավունքներ անհատ ձեռնարկատերերի գծով
		13837	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ պահանջի իրավունքներ՝ տրված այլ անձանց գծով

»,

5) Հաշվային պլանի 14-րդ բաժնի անվանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

14 Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

»,

6) Հաշվային պլանի 186-րդ ենթաբաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

186	Ներդրումային ֆոնդերի կառավարման գծով ստացվելիք գումարներ		
	1860	Ներդրումային ֆոնդերի կառավարման գծով կառավարիչների կողմից ստացվելիք գումարներ	
		18600	Ներդրումային ֆոնդերի կառավարման գծով կառավարիչների կողմից ստացվելիք պարգևավճարներ
		18601	Ներդրումային ֆոնդերի կառավարման գծով կառավարիչների կողմից ստացվելիք այլ գումարներ

»,

7) Հաշվային պլանից հանել 19116-րդ «Կանխավճարներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով» տողը և 19117-րդ «Գերավճարներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով» տողը,

8) Հաշվային պլանի 192-րդ ենթաբաժնի անվանումից հանել «ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներից» բառերը,

9) Հաշվային պլանի 192-րդ ենթաբաժինը 19220-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթաբաժիններով.

«

	1923	Ասոցիացված կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ	
		19230	Ասոցիացված բանկերում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ
		19231	Ասոցիացված վարկային կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ
		19232	Ասոցիացված ներդրումային ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ
		19233	Ասոցիացված ապահովագրական ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ
		19234	Ասոցիացված այլ ֆինանսական կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ
		19235	Ասոցիացված այլ կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ
	1924	Դուստր կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ	
		19240	Դուստր բանկերում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ
		19241	Դուստր վարկային կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ
		19242	Դուստր ներդրումային ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ
		19243	Դուստր ապահովագրական ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ
		19244	Դուստր այլ ֆինանսական կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ
		19245	Դուստր այլ կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ
	1925	Համատեղ վերահսկվող միավորներում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ	
		19250	Համատեղ վերահսկվող միավորներում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ»

»,

10) Հաշվային պլանի 20-րդ բաժնի անվանման մեջ «Ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ» բառերը փոխարինել «Ներդրումներ» բառով,

11) Հաշվային պլանի 20-րդ բաժինը 20105-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթաբաժիններով.

«

202	Ասոցիացված և դուստր կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ		
	2020	Ասոցիացված կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	
		20000	Ասոցիացված բանկերում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20001	Ասոցիացված վարկային կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20002	Ասոցիացված ներդրումային ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20003	Ասոցիացված ապահովագրական ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20004	Ասոցիացված այլ ֆինանսական կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20005	Ասոցիացված այլ կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
	2021	Դուստր կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	
		20210	Դուստր բանկերում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20211	Դուստր վարկային կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20212	Դուստր ներդրումային ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20213	Դուստր ապահովագրական ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20214	Դուստր այլ ֆինանսական կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20215	Դուստր այլ կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
	2022	Համատեղ վերահսկվող միավորներում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	
		20220	Համատեղ վերահսկվող միավորներում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
203	Այլ անձանց կանոնադրական կապիտալներում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների հնարավոր կորուստների պահուստ		
	2030	Այլ անձանց կանոնադրական կապիտալներում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների հնարավոր կորուստների պահուստ	
		20300	Այլ անձանց կանոնադրական կապիտալներում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների հնարավոր կորուստների պահուստ բանկերի գծով
		20301	Այլ անձանց կանոնադրական կապիտալներում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների հնարավոր կորուստների պահուստ վարկային կազմակերպությունների գծով
		20302	Այլ անձանց կանոնադրական կապիտալներում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների հնարավոր կորուստների պահուստ ներդրումային ընկերությունների գծով
		20303	Այլ անձանց կանոնադրական կապիտալներում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների հնարավոր կորուստների պահուստ ապահովագրական ընկերությունների գծով

		20304	Այլ անձանց կանոնադրական կապիտալներում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների հնարավոր կորուստների պահուստ այլ ֆինանսական կազմակերպությունների գծով
		20305	Այլ անձանց կանոնադրական կապիտալներում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների հնարավոր կորուստների պահուստ այլ կազմակերպությունների գծով

»,

12) Հաշվային պլանի 22-րդ բաժինը 22313-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 224-րդ «Գուդվիլ» ենթաբաժնով.

«

224	Գուդվիլ		
	2240	Գուդվիլ	
		22400	Գուդվիլ
	2241	Գուդվիլի արժեզրկում	
		22410	Գուդվիլի արժեզրկում

»,

13) Հաշվային պլանի 23-րդ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

23	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ		
230	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ		
	2300	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ	
		23000	Հողամասեր
		23001	Շենքերի և շինություններ
		23002	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ
	2301	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվների կուտակված արժեզրկում	
		23010	Հողամասերի կուտակված արժեզրկում
		23011	Շենքերի և շինությունների կուտակված արժեզրկում
		23012	Այլ ոչ ընթացիկ ակտիվների կուտակված արժեզրկում
231	Գույքի բռնագանձման արդյունքում առաջացած վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ		
	2310	Գույքի բռնագանձման արդյունքում առաջացած վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ	
		23100	Հողամասեր
		23101	Շենքեր և շինություններ
		23102	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ
	2311	Գույքի բռնագանձման արդյունքում առաջացած վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվների կուտակված արժեզրկում	
		23110	Հողամասերի կուտակված արժեզրկում
		23111	Շենքերի և շինությունների կուտակված արժեզրկում
		23112	Այլ ոչ ընթացիկ ակտիվների կուտակված արժեզրկում

»,

14) Հաշվային պլանի 250-րդ ենթաբաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

250	Պաշարներ		
	2500	Պաշարներ	
		25000	Պաշարներ
	2501	Գույքի բռնագանձման արդյունքում առաջացած պաշարներ	
		25010	Գույքի բռնագանձման արդյունքում առաջացած պաշարներ

»,

15) Հաշվային պլանից հանել 253-րդ «Բռնագանձված գրավ» ենթաբաժինը՝ իր համապատասխան տողերով,
16) Հաշվային պլանի 3700-րդ տողում «ավանդային սերտիֆիկատներ» բառերը փոխարինել «արժեթղթեր» բառով,
17) Հաշվային պլանի 392-րդ «Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր» ենթաբաժինը 39230-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

«

	3924	Կրեդիտորական պարտքեր բաժնային արժեթղթերի հետգնման գծով	
		39240	Կրեդիտորական պարտքեր բաժնային արժեթղթերի հետգնման գծով

»,

18) Հաշվային պլանի 420-րդ «Պահուստներ» ենթաբաժինը 42000-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

«

	4201	Պայմանական պարտավորությունների գծով հնարավոր կորուստների պահուստ	
		42010	Պայմանական պարտավորությունների գծով հնարավոր կորուստների պահուստ

»,

19) Հաշվային պլանի 511-րդ «Չվճարված կապիտալ» ենթաբաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

511	Չվճարված կապիտալ		
	5110	Չվճարված բաժնետոմսեր	
		51100	Չվճարված սովորական բաժնետոմսեր՝ անվանական արժեքով
		51101	Չվճարված սովորական բաժնետոմսեր՝ անվանական արժեքը գերազանցող չափով
		51102	Չվճարված արտոնյալ բաժնետոմսեր՝ անվանական արժեքով
		51103	Չվճարված արտոնյալ բաժնետոմսեր՝ անվանական արժեքը գերազանցող չափով
	5111	Չվճարված բաժնեմասեր և փայամասնակցություններ	
		51110	Չվճարված բաժնեմասեր՝ անվանական արժեքով
		51111	Չվճարված բաժնեմասեր՝ անվանական արժեքը գերազանցող չափով
		51112	Չվճարված փայամասնակցություններ՝ անվանական արժեքով
		51113	Չվճարված փայամասնակցություններ՝ անվանական արժեքը գերազանցող չափով

»,

20) Հաշվային պլանի 662 ենթաբաժինը 66231-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

«

	6624	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկման հակադարձումից ստացված օգուտներ	
		66240	Հողամասերի արժեզրկման հակադարձումից ստացված օգուտներ
		66241	Շենքերի և շինությունների արժեզրկման հակադարձումից ստացված օգուտներ
		66242	Այլ ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկման հակադարձումից ստացված օգուտներ

»,

21) Հաշվային պլանի 71-րդ «Ոչ տոկոսային ծախսեր» բաժինը 71300-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթաբաժնով.

«

714	Բաժնեմասնակցություններից և փայամասնակցություններից ստացվող վնասներ		
	7140	Բաժնեմասնակցություններից և փայամասնակցություններից ստացվող վնասներ	
		71400	Բանկերի մոտ բաժնեմասնակցություններից և փայամասնակցություններից ստացվող վնասներ

		71401	Վարկային կազմակերպությունների մոտ բաժնեմասնակցություններից և փայամասնակցություններից ստացվող վնասներ
		71402	Ներդրումային ընկերությունների մոտ բաժնեմասնակցություններից և փայամասնակցություններից ստացվող վնասներ
		71403	Ապահովագրական ընկերությունների մոտ բաժնեմասնակցություններից և փայամասնակցություններից ստացվող վնասներ
		71404	Այլ ֆինանսական կազմակերպությունների մոտ բաժնեմասնակցություններից և փայամասնակցություններից ստացվող վնասներ

»,

22) Հաշվային պլանի 722-րդ ենթաբաժինը 72231-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

«

	7224	Գուդվիլի արժեզրկում	
		72240	Գուդվիլի արժեզրկում
	7225	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկումից առաջացած կորուստներ	
		72250	Հողամասերի արժեզրկումից առաջացած կորուստներ
		72251	Շենքերի և շինությունների արժեզրկումից առաջացած կորուստներ
		72252	Այլ ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկումից առաջացած կորուստներ

»,

23) Հաշվային պլանից հանել 73043-րդ «Ծախսեր չաշխատող ակտիվների՝ նախորդ ժամանակաշրջանում հաշվեգրված տոկոսների գծով» տողը,

24) Հաշվային պլանի 81-րդ բաժինը 81301-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ ենթաբաժնով.

«

814	Ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներ		
	8140	Կազմակերպության կողմից կնքված ապահովագրական պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներ	
		81400	Կազմակերպության կողմից կնքված ապահովագրական պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներ
	8141	Հաճախորդի կողմից կնքված ապահովագրական պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներ	
		81410	Ֆինանսական կազմակերպությունների կողմից կնքված ապահովագրական պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներ
		81411	Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային, ոչ առևտրային կազմակերպությունների և հիմնարկների կողմից կնքված ապահովագրական պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներ
		81412	Ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից կնքված ապահովագրական պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներ
		81413	Այլ անձանց կողմից կնքված ապահովագրական պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներ

»,

25) Հրահանգում «վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» բոլոր բառերը փոխարինել «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ» բառերով,

26) Հրահանգի 14-րդ բաժնի նկարագրությունում «մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ» բառերը փոխարինել «ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ» բառերով,

27) Հրահանգում «ՀՀՄՍ 39» բառը փոխարինել «ՖՀՄՍ 9» բառով,
28) Հրահանգի «Ընդհանուր դրույթներ» մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ներդրումային ֆոնդերի հետ կապված հաշվառումն իրականացվում է «այլ ֆինանսական կազմակերպությունների» համար նախատեսված տողերում՝ անկախ ներդրումային ֆոնդերի կազմակերպական կամ իրավական կարգավիճակից:»,
29) Հրահանգի 12-րդ բաժնի նկարագրության մեջ «128 «Սկզբնական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ»» բառերից հետո լրացնել «129 «Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ»» բառերը,
30) Հրահանգի 122-րդ ենթաբաժնի նկարագրությունից հանել «Ենթաբաժնի մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն եղանակով, բացառությամբ օպցիոնների հաշվառման, որտեղ գործիքի ձեռքբերման պահին կատարվում է

Դտ - 12202

Կտ - Դրամական միջոցներ

այնուհետ հաշիվը ենթարկվում է վերագնահատման:» նախադասությունը,
31) Հրահանգի 12200-րդ հաշվի նկարագրության մեջ «72122» թիվը փոխարինել «72102» թվով,
32) Հրահանգի 122-րդ ենթաբաժնի 12203-րդ հաշվի նկարագրությունից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ 12202-րդ հաշվի նկարագրությունը.

«12202 «Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված օպցիոն» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից գնված գնման և վաճառքի օպցիոնների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է իրական արժեքով: Պայմանագրի կնքման ժամանակ իրականացվում է գրանցում օպցիոնի պարգևավճարի չափով՝ ապագայում ձեռքբերման ենթակա գումարները արտացոլելով 80202, իսկ վաճառքի ենթակա գումարները՝ 80206 հաշիվներում:

Գնված գնման կամ վաճառքի (օրինակ՝ արտարժույթի) օպցիոնի դեպքում

Դտ - 12202 (պարգևավճարի չափով)

Կտ - Դրամական միջոցներ

այնուհետ, իրական արժեքի բարենպաստ վերագնահատման դեպքում

Դտ - 12202

Կտ - 66102

իրական արժեքի անբարենպաստ վերագնահատման դեպքում

Դտ - 72102

Կտ - 12202:

Եթե, օրինակ, արտարժույթի գնման կամ վաճառքի օպցիոնի համար իրական արժեքի արդար գնանշման աղբյուր առկա չէ, ապա անհրաժեշտ է առաջնորդվել արտարժույթի փոխարժեքով: Արտարժույթի գնման օպցիոնի դեպքում հաշիվը դեբետագրվում է ընթացիկ փոխարժեքով հաշվարկված գումարի և պայմանագրով սահմանված փոխարժեքով հաշվարկված գումարի տարբերության աճի չափով՝ փոխարժեքի աճի դեպքում և դեբետագրվում տարբերության նվազման չափով՝ փոխարժեքի նվազման պարագայում: Արտարժույթի վաճառքի օպցիոնի դեպքում հաշիվը կրեդիտագրվում է պայմանագրով սահմանված փոխարժեքով հաշվարկված գումարի և ընթացիկ փոխարժեքով հաշվարկված գումարի տարբերության նվազման չափով՝ փոխարժեքի նվազման դեպքում և դեբետագրվում տարբերության աճի չափով՝ փոխարժեքի աճի դեպքում: Բացասական տարբերությունների դեպքում գրանցում չի իրականացվում, քանզի այս պարագայում օպցիոնի գնորդը կօգտվի իր իրավունքից, և օպցիոնը չի իրականացվի ոչ շահավետ լինելու պատճառով, հետևաբար օպցիոնը կորցնում է իր արժեքը:

Գնված գնման/վաճառքի օպցիոնի իրականացման դեպքում

Դտ - Դրամական միջոցներ (արտարժույթ/ՀՀ դրամ, պայմանագրային գումար)

Կտ - Դրամական միջոցներ (ՀՀ դրամ/(արտարժույթ, պայմանագրային գումար)

Դտ - 72102 (պարգևավճարի չափով)

Կտ - 12202 (հաշվեկշռային արժեքով)»,
33) Հրահանգի 13-րդ բաժնի նկարագրության մեջ «137 «Սկզբնական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ»» բառերից հետո լրացնել «138 «Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վարկեր և փոխառություններ»» բառերը,
34) Հրահանգի 13-րդ բաժնի 3-րդ նախադասությունում «բացառությամբ մեկ տարբերության.» բառերը փոխարինել «բացառությամբ հետևյալ տարբերությունների. ճանաչումը իրականացվում է

իրական արժեքով՝ գումարած գործարքի իրականացմանն ուղղակիորեն առնչվող գործառնական ծախսերի գումար և» բառերով,

35) Հրահանգի 14000-րդ հաշվի դեբետագրումը նկարագրող «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) արժեթուղթը ձեռք բերելիս՝

Դտ - 14000 (իրական արժեք՝ գումարած գործարքի իրականացմանն ուղղակիորեն առնչվող գործառնական ծախսերի գումար)

Կտ - Դրամական միջոցներ

Այն դեպքում, երբ ձեռքբերման համար վճարած գումարը տարբերվում է ճանաչման արժեքից, տարբերությունը վերագրվում է առուվաճառքից եկամուտներին կամ վնասին:»,

36) Հրահանգի 14001-րդ հաշվի դեբետագրումը նկարագրող «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) արժեթուղթը ձեռք բերելիս՝

Դտ - 14001 (իրական արժեք՝ գումարած գործարքի իրականացմանն ուղղակիորեն առնչվող գործառնական ծախսեր)

Կտ - Դրամական միջոցներ

Այն դեպքում, երբ ձեռքբերման համար վճարած գումարը տարբերվում է ճանաչման արժեքից, տարբերությունը վերագրվում է առուվաճառքից եկամուտներին կամ վնասին:»,

37) Հրահանգի 19-րդ բաժնի առաջին պարբերությունից հանել «ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներից» բառերը,

38) Հրահանգի 20-րդ բաժնի անվանման մեջ «Ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ» բառերը փոխարինել «Ներդրումներ» բառով,

39) Հրահանգի 20-րդ բաժնի առաջին նախադասությունում ««Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ինքնարժեքով հաշվառվող ներդրումների հնարավոր կորուստների պահուստ»» բառերից հետո լրացնել «,«202 «Ասոցիացված և դուստր կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ», «203 Այլ անձանց կանոնադրական կապիտալներում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների հնարավոր կորուստների պահուստ»» բառերը,

40) Հրահանգի 20-րդ բաժնում «Բաժին 200» բառերը փոխարինել «Ենթաբաժին 200» բառերով,

41) Հրահանգի 20-րդ բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 202 «Ասոցիացված և դուստր կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ» ենթաբաժնով.

«Ենթաբաժին 202
«Ասոցիացված և դուստր կազմակերպություններում
բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ»

Ենթաբաժին 202-ում ներառված հաշիվները նախատեսված են կապակցված կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների հաշվառման համար:

1-ին կարգի հաշիվ 2020
«Ասոցիացված կազմակերպություններում բաժնեմասնակցության
մեթոդով հաշվառվող ներդրումներ»

20200 «Ասոցիացված բանկերում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից բանկերի կանոնադրական կապիտալում նշանակալի ազդեցություն ձևավորող մասնակցությունների հաշվառման համար:

Բաժնեմասնակցության մեթոդի կիրառման դեպքում ներդրումը գրանցվում է ինքնարժեքով (ձեռքբերման արժեքով): Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներդրումներից եկամուտներն արտացոլվում են ներդրման օբյեկտի սեփական կապիտալի փոփոխությանը համապատասխան՝ կապիտալի ավելացման դեպքում ներդրողի մոտ ներդրման ծավալի ավելացմանը զուգահեռ կարձանագրվի եկամուտ և հակառակը: Ներդրման օբյեկտի կողմից շահաբաժինների բաշխման վերաբերյալ որոշումը կհանգեցնի ներդրման ծավալի նվազմանը:

Հաշիվը դեբետագրվում է ներդրման օբյեկտում ներդրում կատարելիս, ձեռքբերման արժեքով՝

Դտ - 20200

Կտ - Դրամական միջոցներ

Եթե ներդրումը ձեռք է բերվել այլ ակտիվների կամ բանկի բաժնետոմսերի փոխանակման միջոցով՝

Դտ - 20200

Կտ - Այլ ակտիվներ, 50 «Կանոնադրական հիմնադրամ»

Ներդրման օբյեկտի արդյունավետ գործունեության արդյունքում նրա կապիտալի ավելացման դեպքում՝

Դտ - 20200

Կտ - 6100

Ներդրման օբյեկտի գործունեության արդյունքում նրա կապիտալի նվազման դեպքում՝

Դտ - 7140

Կտ - 20200

Ներդրման օբյեկտի կողմից շահաբաժիններ հայտարարելու դեպքում՝

Դտ - 1923, 1924, 1925

Կտ - 20200»,

42) Հրահանգի 22-րդ բաժնի նկարագրությունում «223 «Շահագործումից դուրս գտնվող անորոշ ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ»» բառերից հետո լրացնել «, «224 «Գուդվիլ»» բառերը,

43) Հրահանգի 22-րդ բաժինը «ընդգրկված հաշիվների դեպքում:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 224 «Գուդվիլ» ենթաբաժնով.

«224 «Գուդվիլ»

Ենթաբաժին 224-ում ներառված հաշիվը նախատեսված է գուդվիլի հաշվառման համար, որը հանդիսանում է կազմակերպությանը մեկ այլ կազմակերպության միացման գործընթացի արդյունքում առաջացող ներդրման գումարի և միացվող կազմակերպության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքի դրական տարբերությունը: Գուդվիլի ճանաչման համար կազմակերպությանը անհրաժեշտ է առանձնացնել դրամաստեղծ միավորը: Գուդվիլը ենթակա է արժեզրկման դրամաստեղծ միավորի արժեզրկման փորձաքննության արդյունքում:»,

44) Հրահանգի 24-րդ բաժնի 240 ենթաբաժնի նկարագրության մեջ «24010» թիվը փոխարինել «24100» թվով,

45) Հրահանգի 24-րդ բաժնի 240 ենթաբաժնի նկարագրության մեջ «24020» թիվը փոխարինել «24200» թվով,

46) Հրահանգի 25-րդ «Այլ ակտիվներ» բաժնից հանել «253 «Բռնագանձված գրավ»,» բառերը և 253 «Բռնագանձված գրավ» ենթաբաժինը,

47) Հրահանգի 372-րդ ենթաբաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3720-րդ հաշվի նկարագրությունը.

«1-ին կարգի հաշիվ 3720

«Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված առևտրային նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ»

37202 «Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված օպցիոն» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից վաճառված գնման և վաճառքի օպցիոնների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է իրական արժեքով: Պայմանագրի կնքման ժամանակ իրականացվում է գրանցում օպցիոնի պարգևավճարի չափով:

Վաճառված գնման կամ վաճառքի (օրինակ՝ արտարժույթի) օպցիոնի դեպքում՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 37202 (պարգևավճարի չափով)

այնուհետ, իրական արժեքի բարենպաստ վերագնահատման դեպքում՝

Դտ - 37202

Կտ - 66102

իրական արժեքի անբարենպաստ վերագնահատման դեպքում՝

Դտ - 72102

Կտ - 37202:

Եթե, օրինակ, արտարժույթի գնման կամ վաճառքի օպցիոնի համար իրական արժեքի արդար գնանշման աղբյուր առկա չէ, ապա անհրաժեշտ է առաջնորդվել արտարժույթի փոխարժեքով: Արտարժույթի գնման օպցիոնի դեպքում հաշիվը կրեդիտագրվում է ընթացիկ փոխարժեքով հաշվարկված գումարի և պայմանագրով սահմանված փոխարժեքով հաշվարկված գումարի տարբերության աճի չափով՝ փոխարժեքի աճի դեպքում և դեբետագրվում տարբերության նվազման չափով՝ փոխարժեքի նվազման պարագայում: Արտարժույթի վաճառքի օպցիոնի դեպքում հաշիվը դեբետագրվում է պայմանագրով սահմանված փոխարժեքով հաշվարկված գումարի և ընթացիկ փոխարժեքով հաշվարկված գումարի տարբերության նվազման չափով՝ փոխարժեքի նվազման դեպքում և կրեդիտագրվում տարբերության աճի չափով՝ փոխարժեքի աճի պարագայում: Բացասական տարբերությունների դեպքում գրանցում չի իրականացվում, քանզի այս պարագայում օպցիոնի գնորդը կօգտվի իր իրավունքից, և օպցիոնը չի իրականացվի ոչ շահավետ լինելու պատճառով, հետևաբար օպցիոնը կորցնում է իր արժեքը:

Վաճառված գնման/վաճառքի օպցիոնի իրականացման դեպքում

Դտ - Դրամական միջոցներ (ՀՀ դրամ/ արտարժույթ, պայմանագրային գումար)

Կտ - Դրամական միջոցներ (արտարժույթ/ՀՀ դրամ, պայմանագրային գումար)

Դտ - 37202 (հաշվեկշռային արժեքով)

Կտ - 62102 (պարգևավճարի չափով)»,

48) Հրահանգի 50000-րդ «Սովորական բաժնետոմսեր-անվանական արժեք» հաշիվը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«50000 «Սովորական բաժնետոմսեր-անվանական արժեք» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է բաժնետոմսերի անվանական արժեքով: Հաշիվը կրեդիտագրվում է սովորական բաժնետոմսերի յուրաքանչյուր տեղաբաշխման արդյունքում կանոնադրական կապիտալի համապատասխան փոփոխության գրանցման դեպքում: Հաշիվը դեբետագրվում է սովորական բաժնետոմսերի ձեռքբերումից կամ հետգնումից հետո դրանց մարելու դեպքում՝ կանոնադրական կապիտալի համապատասխան փոփոխության գրանցումից հետո:»,

49) Հրահանգի 50010-րդ «Արտոնյալ բաժնետոմսեր-անվանական արժեք» հաշիվը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«50010 «Արտոնյալ բաժնետոմսեր-անվանական արժեք» - հաշիվը նախատեսված է բանկի կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ՝ 2-րդ կարգի հաշիվ 50000-ի դեպքում:»,

50) Հրահանգի 51-րդ «Հետ գնված և չվճարված կապիտալ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԲԱԺԻՆ 51

«ՀԵՏ ԳՆՎԱԾ ԵՎ ՉՎՃԱՐՎԱԾ ԿԱՊԻՏԱԼ»

Բաժին 51-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 510 «Հետ գնված կապիտալ», 511 «Չվճարված կապիտալ»:

Բաժին 51-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են կազմակերպության կողմից հետ գնված կամ ձեռք բերված բաժնային արժեթղթերի ընդհանրացման համար: Հաշիվներն ակտիվային են, կարգավորող:

Հաշվի դեբետում արտացոլվում է կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնային արժեթղթերի այն մասը, որի դիմաց մասնակիցների (հիմնադիրների) կողմից չի իրականացվել վճարում (ամբողջովին կամ մասամբ), ինչպես նաև կազմակերպության կողմից հետ գնված կամ ձեռք բերված և դեռևս չտեղաբաշխված կամ չմարված բաժնային արժեթղթերի անվանական արժեքը, իսկ կրեդիտում՝ տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց պարտքի մարումը կամ հետ գնված կամ ձեռքբերված բաժնային արժեթղթերի մարումը կամ տեղաբաշխումը:

Ենթաբաժին 511
«Չվճարված կապիտալ»

Ենթաբաժին 511-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնային արժեթղթերի այն մասի հաշվառման համար, որի դիմաց մասնակիցների (հիմնադիրների) կողմից չի իրականացվել վճարում (ամբողջովին կամ մասամբ):

Ենթաբաժին 511-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 5110 «Չվճարված բաժնետոմսեր», 5111 «Չվճարված բաժնեմասեր և փայամասնակցություններ»:

1-ին կարգի հաշիվ 5100
«Չվճարված բաժնետոմսեր»

51100 «Չվճարված սովորական բաժնետոմսեր՝ անվանական արժեքով» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի այն մասի հաշվառման համար, որի դիմաց մասնակիցների (հիմնադիրների) կողմից չի իրականացվել վճարում (ամբողջովին կամ մասամբ):

Հաշիվը դեբետագրվում է տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքի դիմաց պակաս վճարած գումարի չափով

Դտ - 51100

Կտ - Դրամական միջոցներ, 39240

Հաշիվը դեբետագրվում է տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքի դիմաց կատարված վճարի գումարի չափով:

51101 «Չվճարված սովորական բաժնետոմսեր՝ անվանական արժեքը գերազանցող չափով» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը գերազանցող գումարի այն մասի հաշվառման համար, որի դիմաց մասնակիցների (հիմնադիրների) կողմից չի իրականացվել վճարում (ամբողջովին կամ մասամբ):

Հաշիվը դեբետագրվում է տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը գերազանցող գումարի պակաս վճարած մասով

Դտ - 51101

Կտ - Դրամական միջոցներ, 39240

Հաշիվը դեբետագրվում է տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը գերազանցող գումարի դիմաց կատարված վճարի գումարի չափով:

Ենթաբաժին 511-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ՝ 51100 և 51101 հաշիվների դեպքում:»,

51) Հրահանգի 71-րդ բաժնի երկրորդ նախադասությունում ««Ֆինանսական հաշտարարի գրասենյակի գծով ծախսեր»» բառերից հետո լրացնել «, «714 «Բաժնեմասնակցություններից և փայամասնակցություններից ստացվող վճասներ»» բառերը,

52) Հրահանգի 81-րդ բաժնի 1-ին նախադասությունում «813 «Պայմանական ակտիվներ և պարտավորություններ»» բառերից հետո լրացնել «, 814 «Ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներ»» բառերը,

53) Հրահանգի 81-րդ բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ «814 Ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներ» ենթաբաժնով.

«Ենթաբաժին 814
«Ապահովագրության պայմանագրերով նախատեսված
ապահովագրական գումարներ»

Ենթաբաժին 814-ում ներառված հաշիվները նախատեսված են կազմակերպության կողմից կնքված ապահովագրական պայմանագրերով սահմանված վնասների փոխհատուցման առավելագույն գումարների արտացոլման համար, ինչպես նաև հաճախորդների կողմից կնքված այն ապահովագրական պայմանագրերով սահմանված վնասների փոխհատուցման առավելագույն գումարների արտացոլման համար, որոնց դեպքում կազմակերպությունը հանդիսանում է շահառու:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 դեկտեմբերի 2017 թ., N 292-Ն

ՀՀ ֆինանսների նախարար Վ. ԱՐԱՄՅԱՆ
19 հունվարի 2018 թ., N 14-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը համապատասխանեցնել Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում իրականացված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ և 59-րդ հոդվածները, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 1-ին ենթակետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը որոշում են.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հուլիսի 10-ի «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը» և «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումները» հաստատելու մասին թիվ 205-Ն որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) և Որոշմամբ ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի օգոստոսի 6-ի թիվ 624-Ն հրամանով հաստատված Հավելվածներում կատարել հետևյալ լրացումն ու փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «Հաշվապահական հաշվեկշիռ» բառերը փոխարինել «Հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին» բառերով:
2) «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումները» Հավելված 10-ում.
   ա. 7.17-րդ կետում.
      ա1. «Վարկերի և փոխատվությունների» բառերը փոխարինել «Ամորտիզացված արժեքով հաշվառվող տրված վարկերի և փոխառությունների» բառերով:
      ա2. «հաճախորդներին տրամադրված վարկերը և փոխատվությունները» բառերը փոխարինել «հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերը և փոխառությունները» բառերով:
3) «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումները» Հավելված 10-ում 1.18-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.19-րդ կետ՝

«1.19 Հրահանգում կիրառվող ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվները ներառում են ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները՝ բացառությամբ ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և փոխառությունների:»:

4) «Հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին» (ձև թիվ 2) Հավելված 2-ում «Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ» բառերը փոխարինել «Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ» բառերով:
5) «Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ» (ձև թիվ 5) Հավելված 5-ում.
   ա. 3.2-րդ կետում.
      ա1. 12-րդ ենթակետում «վարկեր և փոխառություններ՝ բանկերին, հաճախորդներին» բառերը փոխարինել «բանկերին և հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ» բառերով:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. դեկտեմբերի 26-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.02.2018 թ. (ՀՀԳՏ N6 (609), 15.02.2018):

ա2. 13-րդ ենթակետում բոլոր «վարկերի և այլ փոխատվությունների» բառերը փոխարինել «ամորտիզացված արժեքով հաշվառվող տրված վարկերի և փոխառությունների» բառերով:

բ. 3.16-րդ կետում.

բ1. «տրված վարկեր և այլ փոխատվություններ» բոլոր բառերը փոխարինել «ամորտիզացված արժեքով հաշվառվող տրված վարկեր և փոխառություններ» բառերով:

բ2. «Հաճախորդներին տրամադրված ստանդարտ (աշխատող/չարժեզրկված) և խնդրահարույց (չաշխատող/արժեզրկված) վարկերի և փոխատվությունների» բառերը փոխարինել «Հաճախորդներին տրված ստանդարտ (աշխատող/չարժեզրկված) և խնդրահարույց (չաշխատող/արժեզրկված) ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և փոխառությունների» բառերով:

